Գնային առաջարկների հարցում

«ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ-ն **Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ՄՀԸ) ֆինանսավորմամբ իրականացվող** «Սևանա լճի խորհուրդ»ծրագրի շրջանակներում իրականացնում է Սևանա լճի վերաբերյալ էկոլոգիական ռիսկերի մանրամասն գնահատման և մետա-վերլուծության ծառայությունների գնային առաջարկների հարցում:

Գնային առաջարկները անհրաժեշտ է լրացնել համաձայն կցված ձևաչափի՝ կնքված(կնիքի առկայության դեպքում) և ստորագրված ուղարկելով այն info@blejanngo.org, blejanli@gmail.com, asyayvazyan@gmail.com էլեկտրոնային հասցեներին մինչև սույն թվականի Հունիսի 25-ը:

Ծառայության մատուցման սկիզբ՝ Օգոստոս 1:

Ծառայության տևողություն՝ Օգոստոսի 1 –Հոկտեմբերի 30, 2022

Գնման առարկայի **տեխնիկական առաջադրանք** ներկայացված են ստորև.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՌԻՍԿԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ՄԵՏԱ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ

Նախագծի անվանումը	Սևանա լճի խորհուրդ
Իրականացնող կազմակերպություն	«Բլեջան»բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ
Պաշտոնի անվանում	Ռիսկերի մանրամասն գնահատման և մետա վերլուծության մասնագետ
Պայմանագրի տեսակ	Ծառայությունների մատուցման պայմանագիր
Աշխատանքների սկիզբ	Օգոստոս 1, 2022
Տևողություն:	Օգոստոս 1-Հոկտեմբեր 30, 2022
Աշխատանքի վայրը	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հարակից համայնքներ
Աշխատանքային պայմաններ՝	Պայմանագրային

Պաշտոնի նկարագրություն՝ «Բլեջան»բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ-ն փնտրում է Ռիսկերի մանրամասն գնահատման և Մետա վերլուծության մասնագետի, ով կհմագործակցի ՀԿ-ի կողմից իրականացվող «Սևանա լճի խորհուրդ» ծրագրի (կցվում է) թիմի հետ, իրականացնելով համապատասխան ծրագրի գործողություն 3, գործողություն 6, գործողություն 7-ին և գործողություն 9-ին առնչվող աշխատանքներ: Գործողությունները մանրամասն ներկայացված են կից ֆայլում:

Աշխատանքային պարտականություններ

Աշխատանքը նախատեսվում է իրականացնել 2 փուլով՝ 1-ին փուլի ընթացքում կիրականացվի մետավերլուծություն և ռիսկերի նախնական գնահատում, 2-րդ փուլի ընթացքում՝ ռիսկերի մանրամասն գնահատում

1-ին փուլ

Առաջադրանք 1. Մետավերլուծություն

1.1 կատարել մետավերլուծություն, համադրելով համապատասխան ուսումնասիրությունների արդյունքները: Վերլուծությունը պետք է համախմբի և ամփոփի Սևանա լճին առնչվող քաղաքականությունը, օրենսդրական դաշտը, Սևանա լճից ջրառի և ջրի պահանջարկի, կլիմայական ռիսկերի և այլ ռիսկերի հետ կապված բոլոր փաստերն ու թվերը:

1.2 առկա փաստերի հիման վրա սահմանել առաջնահերթություններ և նախապատրաստել հիմք չեզոք քննարկումների համար

2-րդ փուլ

Առաջադրանք 2. Ռիսկերի մանրամասն գնահատում

2.1 վերլուծել Սևանա լճի վրա ուղղակի և անուղղակի գիտականորեն և փաստերի վրա հիմնված ռիսկերն ու խնդիրները՝ բացահայտել դրանց պատճառները, ազդեցությունները և ազդեցության տակ ընկած խմբերը:

2.2 բացահայտել Սևանա լճի էկոհամակարգի յուրաքանչյուր բաղադրիչի վրաազդող, գիտականորեն հիմնավորվածհիմնական ռիսկերը, դրանց ազդեցությունները և ազդեցությունների սցենարները

2.3 բացահայտել և դասակարգել միևնույն ռիսկին ենթարկվող շահագրգիռ կողմերին, որի միջոցով բացահայտել նաև շահառուներին:

2.4 մշակել և գնահատել յուրաքանչյուր ռիսկի նվազեցմանն ուղղված հնարավոր լուծումների համապատասխան գործողությունները

Առաջադրանք 3. Համապատասխան լուծումների կամ դեպքերի բացահայտում՝ անհրաժեշտության դեպքում դրանք հետագայում հաղորդելու համար

3.1 Հայտնաբերել և պատշաճ ձևով ներկայացնել թեմային առնչվող հաջողված տեղական օրինակները:

3.2 Գտնել համապարփակ լուծումներ, որոնք կօգնեն գաղափարներ հավաքագրել ծրագրի հաջորդ փուլերում:

Առաջադրանք 4. Համապատասխան «բիզնես փաստարկների» մշակում

4.1 պատրաստել «բիզնես փաստարկներ», որոնք կհամոզեն շահագրգիռ կողմերին դառնալ գործընկերության մաս և համատեղ լուծումներ գտնել: Այս առաջադրանքի նպատակն է պատրաստել «բիզնես փաստարկներ»՝ ցույց տալու գործընկերներին, թե ինչպես կարելի է լուծել իրենց խնդիրները գործընկերության միջոցով և ինչ արդյունքներ կարելի է ակնկալել:

4.2 «բիզնես փաստարկներ»-ում ներառել նաև քանակական տեղեկատվություն՝ ցույց տալու համար, թե որքան գումար է կորչում հայտնաբերված խնդիրների և ռիսկերի պատճառով:

Առաջադրանք 5. Սեմինարի կազմակերպում շահագրգիռ կողմերի ներգրավմամբ՝ բացահայտված ռիսկերը քննարկելու նպատակով

5.1աջակցել ծրագրի թիմին կատարված գնահատումների հիման վրա կազմակերպելու աշխատաժողով՝ շահագրգիռ կողմերի հետ համատեղ քննարկելու հայտնաբերված ռիսկերը:

5.2 շահագրգիռ կողմերի հետ բաց քննարկման միջոցովներկայացնել ընկալելի դարձնելբացահայտված ռիսկերն ու փաստերը:

Սահմանված պահանջներ՝

- ✓ Բարձրագույն մասնագիտական կրթություն
- ✓ Ոլորտի առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ
- ✓ Վերլուծական և հետազոտական հմտությունների համապատասխան փորձ (կցել արդեն արված հետազոտությունների օրինակներ, առնվազն 2-ը)
- ✓ Հաղորդակցման հմտություններ
- ✓ Իր լիազորությունների հետ կապված՝ ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի իմացություն,
- ✓ Տրամաբանելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն
- ✓ Անհրաժեշտ մասնագիտական տեղեկատվության տիրապետում
- ✓ Համակարգչային ծրագրերի իմացություն
- ✓ Այլ

Գնային առաջարկները անհրաժեշտ է լրացնել համաձայն ստորև ներկայացված ձևաչափի՝ կնքված(կնիքի առկայության դեպքում) և ստորագրված ուղարկելով այն info@blejanngo.org, blejanli@gmail.com, asyayvazyan@gmail.com էլեկտրոնային հասցեներին մինչև սույն թվականի Հունիսի 25-ը:

Գնային առաջարկի ձևաչափ

-------- կազմակերպությունը, ՀՎՀՀ- ------, հասցե՝ ------, ի դեմս տնօրեն ---------ի, ներկայացնում է ռիսկերի մանրամասն գնահատման և մետա-վերլուծության ծառայության գնային առաջարկ: (ֆիզ անձի դեպքում ավելացնել անձնագրային տվյալները)

Գնային առաջարկի ընդհանուր արժեքը կազմում է՝ , ներառյալ բոլոր հարկատեսակները բացի ԱԱՀ-ից (ավելացված արժեքի հարկ):

Գնային առաջարկը ուժի մեջ է առնվազն 60 օր:

Վճարման պայման՝ 10 աշխատանքային օր հանձման-ընդունման ստորագրումից և հաշիվ-ապրանքագրի հաստատումից հետո:

Տնօրեն՝

Ստորագրություն՝

Կնիք(առկայության դեպքում)՝